ԵՊՀ կարիքների համար գրքերի ձեռքբերման պայմանագիր
N «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/104»

ք. Երևան «20» նոյեմբերի 2017 թ.

ԵՊՀ» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Բաղրամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝.

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 74540 (յոթանասունչորս հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները,

դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«ԵՊՀ» հիմնադրամ	«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	ք. Երևան, Զավարյան 57/19 բն. 142
ՀՎՀՀ 01506928	ՀՎՀՀ 01569235
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010000906	Հ/Հ 205002229529-1001
Ռեկտոր՝ Ա. Սիմոնյան	Տնօրեն՝ Կ. Բաղրամյան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«20» նոյեմբերի 2017 թ. կնքված
«ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/104» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
2	22111120-2	**Գեղարվեստական գիրք «Դեմիան»**	Զանգակ հրատարակչություն, ՀՀ	**Գրքի անվանում՝ Դեմիան** **Հեղինակ՝** Հերման Հեսսե **Հրատարակիչ՝** Զանգակ **Հրատարակության տարեթիվ՝** 2017 **Կազմ՝** փափուկ	հատ	2900	2900	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ
3	22111120-3	**Գեղարվեստական գիրք «Անասնաֆերմա»**	«Անտարես» ՍՊԸ, ՀՀ	**Գրքի անվանում՝ Անասնաֆերմա** **Հեղինակ՝** Ջորջ Օրուել **Հրատարակիչ՝** Անտարես **Հրատարակության տարեթիվ՝** 2013 **Կազմ՝** կոշտ	հատ	2960	2960	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ
6	22111120-6	**Գեղարվեստական գիրք «Սիրելի բարեկամ»**	«Անտարես» ՍՊԸ, ՀՀ	**Գրքի անվանում՝ Սիրելի բարեկամ** **Հեղինակ՝** Գի դը Մոպասան **Հրատարակիչ՝** Անտարես **Հրատարակության տարեթիվ՝** 2013 **Կազմ՝** կոշտ	հատ	4960	4960	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ
7	22111120-7	**Գեղարվեստական գիրք «Ցասման ողկույզները»**	Զանգակ հրատարակչություն, ՀՀ	**Գրքի անվանում՝ Ցասման ողկույզները** **Հեղինակ՝** Ջոն Ստայնբեք **Հրատարակիչ՝** Զանգակ **Հրատարակության տարեթիվ՝** 2017 **Կազմ՝** կոշտ	հատ	6400	6400	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ
8	22111120-8	**Գեղարվեստական գիրք «Ինֆեռնո»**	Զանգակ հրատարակչություն, ՀՀ	**Գրքի անվանում՝ Ինֆեռնո** **Հեղինակ՝** Դեն Բրաուն **Հրատարակիչ՝** Զանգակ **Հրատարակության տարեթիվ՝** 2017 **Կազմ՝** փափուկ	հատ	4900	4900	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ
9	22111120-9	**Գեղարվեստա**	Զանգակ	**Գրքի անվանում՝ Ֆարենհայթ 451**	հատ	3600	3600	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ

		կան գիրք «Ֆարենհայթ 451»	հրատարակչություն, ՀՀ	Հեղինակ՝ Ռեյ Բրեդբրրի Հրատարակիչ՝ Զանգակ Հրատարակության տարեթիվ՝ 2016 Կազմ՝ կոշտ							
10	22111120-10	Գեղարվեստական գիրք «Հեքլբերի Ֆինի «արկածները»	«Անտարես» ՍՊԸ, ՀՀ	Գրքի անվանում՝ Հեքլբերի Ֆինի արկածները Հեղինակ՝ Մարկ Տվեն Հրատարակիչ՝ Անտարես	հատ	4460	4460	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ
11	22111120-11	Գեղարվեստական գիրք «Գուլիվերի »«ճանապարհորդությունները	«Անտարես» ՍՊԸ, ՀՀ	Գրքի անվանում՝ Գուլիվերի ճանապարհորդությունները Հեղինակ՝ Ջոնաթան Սվիֆտ Հրատարակիչ՝ Անտարես Հրատարակության տարեթիվ՝ 2013 Կազմ՝ կոշտ	հատ	4460	4460	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ
12	22111120-12	Գեղարվեստական գիրք «Ռոբինզոն Կրուզո»	«Անտարես» ՍՊԸ, ՀՀ	Գրքի անվանում՝ Ռոբինզոն Կրուզո Հեղինակ՝ Դանիել Դեֆո Հրատարակիչ՝ Անտարես Հրատարակության տարեթիվ՝ 2013 Կազմ՝ կոշտ	հատ	4460	4460	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ
13	22111120-13	Գեղարվեստական գիրք «Համլետ»	«Անտարես» ՍՊԸ, ՀՀ	Գրքի անվանում՝ Համլետ Հեղինակ՝ Ուլիամ Շեքսպիր Հրատարակիչ՝ Անտարես Հրատարակության տարեթիվ՝ 2012 Կազմ՝ կոշտ	հատ	2460	2460	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ
17	22111120-17	Գեղարվեստական գիրք «Ընտիր նովելներ»	Բուկինիստ հրատարակչություն, ՀՀ	Գրքի անվանում՝ Ընտիր նովելներ Հեղինակ՝ Ստեֆան Ցվայգ Հրատարակիչ՝ Բուկինիստ Հրատարակության տարեթիվ՝ 2016 Կազմ՝ կոշտ	հատ	4500	4500	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ
18	22111120-18	Գեղարվեստական գիրք «Եսասեր հսկան»	Զանգակ հրատարակչություն, ՀՀ	Գրքի անվանում՝ Եսասեր հսկան Հեղինակ՝ Օսկար Ուայլդ Հրատարակիչ՝ Զանգակ Հրատարակության տարեթիվ՝ 2016 Կազմ՝ կոշտ	հատ	3400	3400	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ
19	22111120-19	Գեղարվեստական գիրք «Դորիան	Էդիթ Պրինտ հրատար	Գրքի անվանում՝ Դորիան Գրեյի դիմանկարը Հեղինակ՝ Օսկար Ուայլդ	հատ	2600	2600	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ

		Գրեյի դիմանկարը»	ակչություն, ՀՀ	Հրատարակիչ՝ Էդիթ Պրինտ Հրատարակության տարեթիվ՝ 2014 Կազմ՝ փափուկ							
20	22111120-20	Գեղարվեստական գիրք «Ծաղրասարյակ սպանելը»	Զանգակ հրատարակչություն, ՀՀ	Գրքի անվանում՝ Ծաղրասարյակ սպանելը Հեղինակ՝ Հարփըր Լի Հրատարակիչ՝ Զանգակ Հրատարակության տարեթիվ՝ 2015 Կազմ՝ կոշտ	հատ	5880	5880	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ
21	22111120-21	Գեղարվեստական գիրք «Կորուսյալ ժամանակի »Գեղարվեստական գիրք «որոնումներում	Զանգակ հրատարակչություն, ՀՀ	Գրքի անվանում՝ Կորուսյալ ժամանակի որոնումներում Հեղինակ՝ Մարսել Պրուստ Հրատարակիչ՝ Զանգակ Հրատարակության տարեթիվ՝ 2006 Կազմ՝ փափուկ	հատ	1800	1800	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ
22	22111120-22	Գեղարվեստական գիրք «Առակներ, հեքիաթներ, լեգենդներ»	Զանգակ հրատարակչություն, ՀՀ	Գրքի անվանում՝ Առակներ, հեքիաթներ, լեգենդներ Հեղինակ՝ Լեոնարդո դա Վինչի Հրատարակիչ՝ Զանգակ Հրատարակության տարեթիվ՝ 2010 Կազմ՝ կոշտ	հատ	1800	1800	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ
25	22111120-25	Գեղարվեստական գիրք «Լիր արքա»	Էդիթ Պրինտ հրատարակչություն, ՀՀ	Գրքի անվանում՝ Լիր արքա Հեղինակ՝ Ուիլիամ Շեքսպիր Հրատարակիչ՝ Էդիթ Պրինտ Կազմ՝ փափուկ	հատ	2600	2600	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ
26	22111120-26	Գեղարվեստական գիրք «Համլետ»	Էդիթ Պրինտ հրատարակչություն, ՀՀ	Գրքի անվանում՝ Համլետ Հեղինակ՝ Ուիլիամ Շեքսպիր Հրատարակիչ՝ Էդիթ Պրինտ Կազմ՝ փափուկ	հատ	2600	2600	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ
27	22111120-27	Գեղարվեստական գիրք «Մակբեթ»	Էդիթ Պրինտ հրատարակչություն, ՀՀ	Գրքի անվանում՝ Մակբեթ Հեղինակ՝ Ուիլիամ Շեքսպիր Հրատարակիչ՝ Էդիթ Պրինտ Կազմ՝ փափուկ	հատ	2600	2600	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ

28	22111120-28	Գեղարվեստական գիրք «Օթելլո»	Էդիթ Պրինտ հրատարակչություն, ՀՀ	Գրքի անվանում՝ Օթելլո Հեղինակ՝ Ուիլիամ Շեքսպիր Հրատարակիչ՝ Էդիթ Պրինտ Կազմ՝ փափուկ	հատ	2600	2600	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ
29	22111120-29	Գեղարվեստական գիրք «Ռոմեո և Ջուլիետ»	Էդիթ Պրինտ հրատարակչություն, ՀՀ	Գրքի անվանում՝ Ռոմեո և Ջուլիետ Հեղինակ՝ Ուիլիամ Շեքսպիր Հրատարակիչ՝ Էդիթ Պրինտ Կազմ՝ փափուկ	հատ	2600	2600	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV-րդ եռամսյակ

* *մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ԳՆՈՐԴ

«ԵՊՀ» հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
ՀՎՀՀ 01506928
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010000906
Ռեկտոր՝ Ա. Սիմոնյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ
ք. Երևան, Զավարյան 57/19 բն. 142
ՀՎՀՀ 01569235
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 205002229529-1001
Տնօրեն՝ Կ. Բաղրամյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«20» նոյեմբերի 2017 թ. կնքված
«ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/104» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում		
			նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	22111120-2	Գեղարվեստական գիրք «Դեմիան»	2900	-	2900
3	22111120-3	Գեղարվեստական գիրք «Անասնաֆերմա»	2960	-	2960
6	22111120-6	Գեղարվեստական գիրք «Սիրելի բարեկամ»	4960	-	4960
7	22111120-7	Գեղարվեստական գիրք «Ցասման ողկույզները»	6400	-	6400
8	22111120-8	Գեղարվեստական գիրք «Ինֆեռնո»	4900	-	4900
9	22111120-9	Գեղարվեստական գիրք «Ֆարենհայթ 451»	3600	-	3600
10	22111120-10	Գեղարվեստական գիրք «Հեքլբերի Ֆինի «արկածները»	4460	-	4460
11	22111120-11	Գեղարվեստական գիրք «Գուլիվերի ճանապարհորդությունները»	4460	-	4460
12	22111120-12	Գեղարվեստական գիրք «Ռոբինզոն Կրուզո»	4460	-	4460
13	22111120-13	Գեղարվեստական գիրք «Համլետ»	2460	-	2460
17	22111120-17	Գեղարվեստական գիրք «Ընտիր նովելներ»	4500	-	4500
18	22111120-18	Գեղարվեստական գիրք «Եսասեր հսկան»	3400	-	3400
19	22111120-19	Գեղարվեստական գիրք «Դորիան Գրեյի դիմանկարը»	2600	-	2600
20	22111120-20	Գեղարվեստական գիրք «Ծաղրասարյակ սպանելը»	5880	-	5880
21	22111120-21	Գեղարվեստական գիրք «Կորուսյալ ժամանակի որոնումներում»	1800	-	1800
22	22111120-22	Գեղարվեստական գիրք «Առակներ, հեքիաթներ, լեգենդներ»	1800	-	1800
25	22111120-25	Գեղարվեստական գիրք «Լիր արքա»	2600	-	2600
26	22111120-26	Գեղարվեստական գիրք «Համլետ»	2600	-	2600
27	22111120-27	Գեղարվեստական գիրք «Մակբեթ»	2600	-	2600
28	22111120-28	Գեղարվեստական գիրք «Օթելլո»	2600	-	2600
29	22111120-29	Գեղարվեստական գիրք «Ռոմեո և Ջուլիետ»	2600	-	2600

ԳՆՈՐԴ

«ԵՊՀ» հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
ՀՎՀՀ 01506928
«Կոդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010000906
Ռեկտոր՝ Ա. Սիմոնյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ
ք. Երևան, Զավարյան 57/19 բն. 142
ՀՎՀՀ 01569235
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 205002229529-1001
Տնօրեն՝ Կ. Բաղրամյան

(ստորագրություն)
Կ.Տ.